## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ԿՈՆՏԱԿՏ» ՀԱՏՈՒԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

***Հաշվի առնելով***, որ Կողմերն ընդունում են կարևորությունը,

***Ձգտելով*** զարգացնել համագործակցությունը որակյալ մասնագետների պատրաստման միջոցով,

***Կարևորելով*** զգայական ինտեգրացիայի նկատմամբ հետաքրքրության բարձրացումը, ինչպես նաև դրա իրականացման համար գրավիչ պայմանների ստեղծումը,

***Ընդունելով*** Կողմերի պատրաստակամությունը կրթական, մարզական միջոցառումների համատեղ իրականացման համատեքստում,

***Հիմք ընդունելով*** սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները,

***Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝***

### 1. Համագործակցության նպատակը

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

### 2. Համագործակցության ուղղությունները

## МЕМОРАНДУМ О СОТРУДНИЧЕСТВЕ МЕЖДУ ФОНДОМ «ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА АРМЕНИИ» И ДЕТСКИМ ЦЕНТРОМ РАЗВИТИЯ «КОНТАКТ»

***Принимая во внимание***, что Стороны признают важность

***Стремясь*** развивать сотрудничество посредством подготовки квалифицированных специалистов,

***Придавая важность*** повышению интереса к сенсорной интеграции, также созданию привлекательных условий для этого,

***Принимая*** готовность Сторон в контексте совместного осуществления образовательных, спортивных мероприятий,

***Основываясь*** на настоящем меморандуме и взаимных договоренностях,

***Стороны договорились о следующем:***

### 1. Цель сотрудничества

Настоящим меморандумом Стороны предусматривают сотрудничество в рамках законодательства Республики Армения по направлениям, предусмотренным частью 2 меморандума, с применением своих возможностей, средств и опыта.

### 2. Направления сотрудничества

Սույն հուշագրով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Երեխաների զարգացման «Կոնտակտ» հատուկ կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) պատրաստակամություն են հայտնում.

Настоящим меморандумом фонд «Государственный институт физической культуры и спорта Армении» (далее - Институт) и общественная организация «Специальный центр развития детей «Контакт» (далее - Организация ) выражают готовность:

2.1 պարբերաբար միմյանց տեղեկացնել և համատեղ քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր,

2.1. регулярно информировать и совместно обсуждать вопросы, представляющие взаимный интерес,

2.2 փոխադարձ աջակցության ցուցաբերել մարզական, կրթամարզական միջոցառումների կազմակերպման և իրականացման համատեքստում

2.2. оказывать взаимную поддержку в контексте организации и осуществления спортивных, образовательно-спортивных мероприятий

2.3 ուսանողների մասնակցության ակտիվության խթանման նպատակով տեղեկատվական միջոցառումներ կազմակեպել, ստեղծել մասնակցության նպաստավոր պայմաններ

2.3. организовывать информационные мероприятия с целью стимулирования активности участия студентов, создавать благоприятных условия для участия

2.4 Կողմերը երկուստեք պատրաստակամ են նաև.

2.4. Стороны также готовы:

2.4.1 համագործակցել նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ

2.4.1 сотрудничать по совместной реализации инновационных грантовых программ

2.4.2. օգտագործել Կազմակերպության տարածքները Ինստիտուտի պրակտիկ դասերի իրականացման համար

2.4.2. использовать помещения Организации для проведения практических занятий Института

2.4.3 ներգրավել մասնագետներին մարզումների անցկացման նպատակով.

2.4.3 привлечь специалистов для проведения тренировок

2.4.4 համագործակցել Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում

2.4.4 сотрудничать в публикации соответствующих материалов, касающихся деятельности Сторон

2.4.5 համագործակցել երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի մշակման և իրականացման շուրջ

2.4.5 сотрудничать в разработке и реализации программ учебно-образовательного характера, представляющих взаимный интерес

2.4.6 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցել և ստանալ

2.4.6 запрашивать и получать информацию о результатах совместных работ, препятствующих им обстоятельствах

| | |
|---|---|
| 2.4.7 կազմակերպել Կազմակերպությունում ուսանողների պրակտիկան | 2.4.7 организовывать практику студентов в Организации |
| 2.4.8 ներգրավել Կազմակերպությանը Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում | 2.4.8 привлекать Организацию к разработке образовательных программ Института |
| 2.4.9 սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համագործակցել Կողմերի տարածքների, գույքի օգտագործման շուրջ: | 2.4.9 для выполнения функций Сторон в рамках настоящего меморандума, по рабочим нуждам сотрудничать по вопросам использования территорий и имущества Сторон. |
| **3. Համագործակցության սկզբունքները** | **3. Принципы сотрудничества** |
| Կողմերը սույն հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, փոխադարձ հարգանքի և վստահության, համագործակցության սկզբունքներով: | Стороны в рамках настоящего меморандума осуществляют свои функции на принципах законности, взаимопомощи, взаимного уважения и доверия, сотрудничества. |
| **4. Եզրափակիչ դրույթներ** | **4. Заключительные положения** |
| 4.1 Սույն հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: | 4.1 Настоящий меморандум заключается в двух экземплярах на армянском и русском языках, которые имеют равную юридическую силу. Каждой стороне предоставляется по одному экземпляру. |
| 4.2 Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը: | 4.2 Изменения и дополнения к настоящему меморандуму считаются неотъемлемой частью меморандума. |
| 4.3 Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար: Սույն հուշագիրը մտադրությունների մասին համաձայնություն է, ինչը պարունակում և հաստատում է Կողմերի համագործակցելու ցանկությունը և պատրաստակամությունը: Միաժամանակ Կողմերը ընկալում և հաստատում են, որ սույն հուշագրի դրույթները չունեն Կողմերի համար պարտադիր իրավաբանական ուժ: | 4.3 Настоящий меморандум не влечет за собой финансовых обязательств Сторон. Настоящий меморандум является соглашением о намерениях, которое содержит и подтверждает желание и готовность Сторон к сотрудничеству. При этом Стороны понимают и подтверждают, что положения настоящего Меморандума не имеют обязательной юридической силы для Сторон. |
| 4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել հուշագիրը՝ այդ | 4.4 Каждая Сторона может в одностороннем порядке расторгнуть меморандум, |

| | |
|---|---|
| մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին: | уведомив об этом другую Сторону за месяц до этого. |
| 4.5 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2023թ. հունվարի 23-ին: | 4.5 Настоящий меморандум был подписан в Ереване, 23 января 2023 г. |
| Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ: | Настоящий меморандум вступает в силу с момента подписания и действует бессрочно. |
| 5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները | 5. Адреса и реквизиты Сторон |

| | | | |
|---|---|---|---|
| «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ | ԱՁ Ռոման Պետրուշին «Երեխաների զարգացման «Կոնտակտ» հատուկ կենտրոն» | «Государственный институт физической культуры и спорта Армении» фонд | ИП Роман Петрушин «Специальный центр развития детей «Контакт» |
| ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 11 | ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 29 | РА, г. Ереван, ул. Алека Манукяна 11 | РА, г. Ереван, ул. Налбандяна 29 |
| Ռեկտոր Դավիթ Խիթարյան | Խորհրդի նախագահ Ռոման Պետրուշին | Ректор Давит Хитарян | Председатель правления Роман Петрушин |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. | М.П. | М.П. |